ոչ զոյ քաղաքացւոց ընչից իւրեանց, զորմէ տրտունջ է ի բերանս ամենեցուն, այլ և ոչ գրեանց մերոց վաճառելեաց։ Լուաք և զմահ հօր մերոյ մինասայ արքեպիսկոպոսին, և զՖալիտ լինիլն պարոն նահապետին...։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան. 1758 փետր. 19. [Կ. Պոլիս])։

ձձ.

Պատկերահան պարոն յովհաննէսն ի Հռոմ առ Աստուած փոխեցաւ ի փետրվարի[1]։ (Մելգոնեան առ Հ. Զաքարիա, 1758 ապրիլի 4. [Ս. Ղազար])։

ձղ.

Այժմ մեր հայր Մկրտիչ վարդապետն[2] առողջ է յոտիցն, և տարան զնա յաւուրս յայսոսիկ ի Նաալբղաբուն սամաթիոյ, ուր եկաց իբրև շաբաթս երիս, և գնաց ընդ իս յուխտ ի գերեզման երանելի տեառն Կոմիտասայ։ Սառաֆօղլու սարգիս վարդապետն, զոր դեռ ոչ եմ տեսեալ, յայսմ ամի կարգեցաւ քարոզիչ յեկեղեցւոջ սուրբ լուսաւորչին, և հռչակեցաւ ի քաղաքիս քաջ բանասաց, մինչև ընթացան ի լսել զքարոզ նորա խուռն բազմութիւնք, ընդ որս և յոլովք յուղղափառաց և ոմանք ի ֆռանգաց գնացին և հաճեցան։ Թէպէտ և յոմանց լուայ ասել, թէ ոչինչ օգուտ է քարոզ նորա, այլ մանաւանդ վնասակար, զի բազումք պատրեալ ընդ պաճուճազարդ բանս նորա իբրև ուղղափառի թուլանան և հովանան աստի ի մերոց և վաղվաղակի կործանին. և այսպէս ահա ի բազմաց բամբասի նա, թէ զի՞ է, զի դարձեալ յերկրէ քրիստոնէից եկն եմուտ ի մէջ հայոց. եթէ էր նա քաջ ուղղափառ, զայս ոչ առնէր, ասեն։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1758 Ապրիլ 18. ի Կ. Պոլիս)։

ձղա.

Ի Կոստանդնուպոլիս է ծայրագոյն փէսատ և կասկած փոխելոյ զմեծն։ Թանկութիւն եղև ամենայն իրաց. և անթիւ անձինք կամին փախչիլ ի ֆռէնկիստան...։ Հրամայեցաւ արուեստաւորաց չինել զպալատն արքունի որ ի յետրենէ. և յղէ զբազում նաև պարութս ի խառայ տէնիզ. կասկած այնպէս է, իբր թէ տաճիկն կամի բանալ զպատերազմ...։ Պատրիարքն չինեաց զգիրք մի տաճկերէն, և եղև մեծամեծաց հայոց անախորժելի. և արարին սինոդոս այրել զամենայն. բայց պատրիարքն ընդդէմ կայ։ (Հ. Մկրտիչ առ Մելգոնեան, 1758 յուլիս 19. [Կ. Պոլիս])։

ձղբ.

Աստի չուեաց քէֆէցի պարոն Պետրոսն Մահտեսի Ղազարեան՝ դէպ առ ձեզ,... և ընդ նմա առաքեցի զչորս պատկերս, զորս ողորմած հոգի պարոն Յովաննէսն եթող յիշատակ ի կենդանութեան իւրում, և զկնի մահուան նորին ընկալայ ի ժառանգից իւրոց տալով զձեռագիրն իմ, թէ ընկալայ ի կողմանէ Գերյարգելի Աբբայ Հօրն։ (Յովսէփ Քահանայ Գրիգորեան առ Մելգոնեան, 1758 Օգոստ. 26. Հռոմ)։

---

1. Կարևոր նկատեցինք յիշել սոյն թուականը՝ պատկերահանին ունեցած այնքան շահեկան թղթակցութեանց համար՝ զորս հանրութեան ալ ներկայացուցինք։

2. Անանեանց։